ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ՊԸԾՁԲ-17/03-97-2017

<«24» փետրվարի 2017 թ.

ք. Երևան

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Իմպերիում» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Դ. Հովհաննիսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից,միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելված՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին» չհամապատասխանող Ծառայություն.

ա) չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված բնութագրին և ժամկետներին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2.4.2 սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը :

2.4.3 սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2 Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

3.3.1 հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

3.3.2 Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 (երկու) օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 16 650 000 (տասնվեց միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում՝ (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.5 Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6 Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.8 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.9 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	« Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 9	ք. Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 90011004489	Հ/Հ 2050622060861001
ՀՎՀՀ-02586282	ՀՎՀՀ 00135548
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝ Դ.Հովհաննիսյան
Վ.Էլոյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ.Տ
Կ.Տ	

Հավելված 1
2017թ. ---------- --- -ին կնքված
N *գնման պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար ***«Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն»*** 2017 թվականի մրցույթի անցկացման ծառայությունների ձեռքբերում
1. ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատ 2017 թվականի մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) նպատակն և խնդիրներն են՝ 1) անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, նախադպրոցական տարիքի երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում. 2) նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում: 2. Խնդիրներն են՝ 1) ֆիզիկական վարժությունների միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում շարժողական ընդունակությունների ձևավորում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի գաղափարի ձևավորում. 2) նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում. 3) նախադպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում. 4) նախադպրոցական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանում: 3. Մրցույթն անցկացվելու է 3 փուլով. 1) 1-ին փուլ՝ Հայաստանի Հանրապետության 39 համայնքներում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2017 թվականի ապրիլի 4-ից 20-ը. 2) 2-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2017 թ. մայիսի 17-31-ը. 3) 3-րդ՝ եզրափակիչ փուլ (հանրապետական), 2017 թվականի հունիսի 19-ից 20-ը ք. Վանաձորում: 4) Համայնքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) մինչև 2017 թվականի ապրիլի 20-ը: 4. Մրցույթն անցկացվելու է՝ 1) Արագածոտնի մարզ – ք. Աշտարակ, ք. Ապարան, ք. Թալին 2) Արարատի մարզ - ք. Արտաշատ, ք. Արարատ, ք. Մասիս, ք.Վեդի 3) Արմավիրի մարզ - ք. Արմավիր, ք. Էջմիածին, գ. Լեռնագոգ 4) Գեղարքունիքի մարզ - ք. Գավառ, ք. Ճամբարակ, ք. Մարտունի, ք. Վարդենիս, ք. Սևան 5) Լոռու մարզ – ք. Վանաձոր, ք. Ալավերդի, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ, ք. Տաշիր 6) Կոտայքի մարզ - ք. Հրազդան, ք. Աբովյան, ք. Չարենցավան, ք. Եղվարդ 7) Շիրակի մարզ – ք. Գյումրի, ք. Արթիկ, ք. Մարալիկ, գ. Ամասիա 8) Սյունիքի մարզ - ք. Կապան, ք. Գորիս, ք. Սիսիան, ք. Քաջարան, ք. Մեղրի 9) Վայոց ձորի մարզ - ք. Եղեգնաձոր, ք. Վայք 10) Տավուշի մարզ - ք. Իջևան, ք. Դիլիջան, ք. Նոյեմբերյան, ք. Բերդ 11) Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն - ք. Ստեփանակերտ: 5. Մրցույթին կարող են մասնակցել նշված համայնքների և մոտակա համայնքների

Հաստատությունները:

6. Մրցույթի անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը:

7. 1-ին փուլի կազմակերպման և անցկացման աշխատանքները համայնքներում իրականացնում են քաղաքապետարանները, իսկ 2-րդ փուլի մրցումների կազմակերպման և անցկացման աշխատանքները իրականացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը: 3-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

8. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության մարզերի Հաստատությունների ավագ տարիքի բոլոր երեխաները *(թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ և 2 ներկայացուցիչ)*:

9. Մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը տեղերում որոշում են կազմակերպիչները՝ համաձայնեցնելով Նախարարության հետ:

10. Մրցույթի 2-րդ փուլի մրցումներին 1-ին տեղերը գրաված Հաստատությունները կմասնակցեն Վանաձոր քաղաքում անցկացվող եզրափակիչ փուլի մրցումներին:

11. Մրցույթի 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված Հաստատությունները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, մարզագույքով, գավաթներով և շնորհակալագրերով:

12. Մրցույթի ծախսերն իրականացվում են տարեկան պետական բյուջեով նախատեսված «Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար ««Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում» ծրագրի շրջանակում:

1-ին փուլի

մատուցվող ծառայություններ

04-20. 04. 2017թ.

- **Հավաստագիր** (պատվոգիր). չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ

Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ

(120 հատ)

Մարզագույք՝ Նախադպրոցական հաստատություններին

1-ին տեղը՝ (1-ին փուլ)

- **Մարզագույք.** մարմնամարզական ներքնարկներ՝ չափը 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով, հաստությունը 7-10 սմ (40 հատ)
- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից,չափս № 3-4 (6x40=240 հատ)
- Ցատկապարան՝ սիլիկոնե, բռնակները՝ փայտե կամ պլաստմասե (6x40=240 հատ)
- Կոն (Ֆիշկա)՝ բարձրությունը 30 սմ, կոնաձև, պլաստմասե հումքից (6x40=240 հատ)
- Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից, տրամագիծը 90-100 սմ (6x40=240 հատ)

2-րդ տեղը՝ (1-ին փուլ)

- **Մարզագույք.** մարմնամարզական ներքնարկներ՝ չափը 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով, հաստությունը 7-10 սմ (40 հատ)
- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից,չափս № 3-4

(5x40=200 հատ)

- Ցատկապարան՝ սիլիկոնե, բռնակները՝ փայտե կամ պլաստմասե (5x40=200 հատ)
- Կոն (Ֆիշկա)՝ . բարձրությունը 30 սմ, կոնաձև, պլաստմասե հումքից (5x40= 200 հատ)

- Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից, տրամագիծը 90-100 սմ (5x40=200 հատ)

3-րդ տեղը՝ (1-ին փուլ)

- Մարզագույք. մարմնամարզական ներքնարկներ՝ չափը 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով, հաստությունը 7-10 սմ (40 հատ)
- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից,չափս № 3-4 (3x40=120 հատ)
- Ցատկապարան՝ սիլիկոնե, բռնակները՝ փայտե կամ պլաստմասե (4x40=160 հատ)

Կոն (Ֆիշկա)՝ բարձրությունը 30 սմ, կոնաձև, պլաստմասե հումքից (3x40=120 հատ)

- Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից, տրամագիծը 90-100 սմ (4x40=160 հատ)

2-րդ փուլերում

մատուցվող ծառայություններ

17-31. 05 2017թ.

- Հավաստագիր (պատվոգիր). չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ

Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ

(3x11=33 հատ)

Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակությունների համար) 50 սմ, 45 սմ և 40 սմ բարձրությամբ, ոսկեգույն, է պատվանդանով՝
վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել նախարա աշխատակազմի
ՄՍՖԴՔ վարչության հետ

(3x11=33 հատ)

Մարզագույք՝ Նախադպրոցական հաստատություններին

1-ին տեղը՝ (2-րդ փուլ)

- բասկետբոլի վահան՝ օրգանական ապակուց չապսը՝80-60, լրակազմ (զամբյուղ, ցանց)

(1x11=11 հատ)

- Մագլցման աստիճան պարան՝ 3.5-5 մ սինթետիկ կամ բնական թելից

(1x11=11 հատ)

- Մարմանամամարզական մեծ փուչիկ՝՝ տրամագիծ 55-65 սմ, բռնակով, ռեզինե հումքից:

(6x11=66 հատ)

- Գնդակ փոքր մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից,չափս № 2-3

(4x11=44 հատ)

- Ցատկապարան՝ սիլիկոնե, բռնակները՝ փայտե կամ պլաստմասե (4x11=44 հատ)
- Կոն (Ֆիշկա)՝ . բարձրությունը 30 սմ, կոնաձև, պլաստմասե հումքից (4x11=44 հատ)

- Մարմանմարզական օղակներ՝ այլումինե հումքից
տրամագիծը 90-100 սմ (4x11=44 հատ)

2-րդ տեղը՝ (2-րդ փուլ)

- բասկետբոլի վահան՝ օրգանական ապակուց
չապսը՝80-60, լրակազմ (զամբյուղ, ցանց)
(1x11=11 հատ)
- Մագլցման աստիճան պարան՝ 3.5-5 մ
սինթետիկ կամ բնական թելից
(1x11=11 հատ)
- Մարմանամամարզական մեծ փուչիկ՝՝
տրամագիծ 55-65 սմ, բռնակով, ռեզինե հումքից:
(5x11=55 հատ)
- Գնդակ մանկական՝ կաշվե կամ
փոխարինող հումքից,չափս № 3-4 (3x11=33 հատ)
- Ցատկապարան՝ սիլիկոնե, բռնակները՝ փայտե
կամ պլաստմասե (3x11=33 հատ)

Կոն (Ֆիշկա)՝ . բարձրությունը 30 սմ, կոնաձև, պլաստմասե հումքից (3x11=33 հատ)

- Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից
տրամագիծը 90-100 սմ (3x11=33 հատ)

3-րդ տեղը՝ (2-րդ փուլ)

- բասկետբոլի վահան՝ օրգանական ապակուց
չապսը՝80-60, լրակազմ (զամբյուղ, ցանց)
(1x11=11 հատ)
- Մագլցման աստիճան պարան՝ 3.5-5 մ
սինթետիկ կամ բնական թելից
(1x11=11 հատ)
- Մարմանամամարզական մեծ փուչիկ՝՝
տրամագիծ 65 սմ, բռնակով, ռեզինե հումքից:
(4x11=44 հատ)
- Գնդակ մանկական՝ կաշվե կամ
փոխարինող հումքից,չափս № 4-5 (2x11=22 հատ)
- Ցատկապարան՝ սիլիկոնե, բռնակները՝ փայտե
կամ պլաստմասե (2x11=22 հատ)
- Կոն (Ֆիշկա)՝ . բարձրությունը 30 սմ,
կոնաձև, պլաստմասե հումքից (2x11=22 հատ)
- Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից
տրամագիծը 90-100 սմ (2x11=22 հատ)

Տրանսպորտային միջոցներ՝ բեռնատար մեքենա
1 -ին և 2-րդ փուլերի մարզագույք տեղափոխելու համար
(ՀՀ մարզկենտրոններ և Ստեփանակերտ)

3-րդ՝ եզրափակիչ փուլում
մատուցվող ծառայություններ

19-20. 06. 2017 թ. ք. Վանաձոր

ՀՀ Նախագահի վկայագիր. չափը՝ 30 x 20 սմ,
թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ
(3 հատ)

- Մեդալներ. չափը՝ 5 սմ տրամագծով x 3 մմ
հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն
ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ,
սինթետիկ հումքից (1-ին,2-րդ և 3-րդ տեղեր գրված մասնակիցներին)

(3x10=30 հատ)

Շնորհակալագիր. չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ
Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ
(8 հատ)

Մարզագույք՝ Նախադպրոցական Հաստատություններին
1-ին տեղը՝ (3-րդ փուլ)

- Մարմնամարզական պատ՝բարձրությունը 150 սմ,լայնությունը 130 սմ, փայտի հեռավորությունը 15 սմ,տրամագիծը 3 սմ,տախտակը որի վրա ամրացված է աստիճանը 13 սմ (2 հատ)

- Մարմնամարզական նստարան՝ երկարությունը 2.5 մ, փայտի լայնությունը 22-24 սմ, հաստությունը 3.5-5 սմ, ոտքերը մետաղական բարձրությունը 32-35 սմ, ոտքերն միմիյանց հետ կապող փայտ՝ 2.20-2.30մ երկարություն, լաքապատված
(2 հատ)
- Ձգման պարան՝վուշե հումքից,պարանի երկարությունը 8-10մ, տրամագիծ մինչև 3.5 սմ, վերջույթները ամրացված մշակված
(1 հատ)

- բասկետբոլի վահան՝ օրգանական ապակուց չապսը՝80-60, լրակազմ (զամբյուղ, ցանց)
(1 հատ)

- Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ
(2 հատ)
- Մագլցման աստիճան պարան՝ 3.5-5 մ սինթետիկ կամ բնական թելից
(1 հատ)
- Մարմանամամարզական մեծ փուչիկ՝՝ տրամագիծ 55-65 սմ, բռնակով, ռեզինե հումքից:
(10 հատ)
- Գնդակ՝ կաշվե կամ փոխարինող հումքից,չափս № 3-4 (10 հատ)

- Ցատկապարան՝ սիլիկոնե, բռնակները՝ փայտե կամ պլաստմասե (10 հատ)

- Կոն (Ֆիշկա)՝ . բարձրությունը 30 սմ, կոնաձև, պլաստմասե հումքից (10 հատ)

- Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից տրամագիծը 90-100 սմ (10 հատ)

- Մարզագույք. մարմնամարզական ներքնաբկներ՝ չափսը 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով, հաստությունը 7-10 սմ (1 հատ)

2-րդ տեղը՝ (3-րդ փուլ)

- Մարմնամարզական պատ՝բարձրությունը

150 սմ,լայնությունը 130 սմ, փայտի հեռավորությունը
15 սմ,տրամագիծը 3 սմ,տախտակը որի վրա
ամրացված է աստիճանը 13 սմ (2 հատ)

- Մարմնամարզական նստարան՝ երկարությունը 2.5 մ, փայտի լայնությունը 22-24 սմ, հաստությունը 3.5-5 սմ, ոտքերը մետաղական բարձրությունը 32-35 սմ, ոտքերն միմիյանց հետ կապող փայտ՝ 2.20-2.30մ երկարություն, լաքապատված
(2 հատ)

- Ձգման պարան՝ վուշե հումքից,պարանի երկարությունը 8-10մ, տրամագիծ մինչև 3.5 սմ, վերջույթները ամրացված մշակված
(1 հատ)

- բասկետբոլի վահան՝ օրգանական ապակուց չապսը՝80-60, լրակազմ (զամբյուղ, ցանց)
(1 հատ)
- Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ
(2 հատ)
- Մարմանամամարզական մեծ փուչիկ՝ ՝
տրամագիծ 65 սմ, բռնակով, ռեզինե հումքից:
(8 հատ)
- Գնդակ մանկական՝ կաշվե կամ
փոխարինող հումքից, չափս № 3-4 (8 հատ)
- Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից
տրամագիծը 90-100 սմ (8 հատ)

3-րդ տեղը՝ (3-րդ փուլ)

- Մարմնամարզական պատ՝բարձրությունը
150 սմ,լայնությունը 130 սմ, փայտի հեռավորությունը
15 սմ,տրամագիծը 3 սմ,տախտակը որի վրա
ամրացված է աստիճանը 13 սմ (2 հատ)

- Մարմնամարզական նստարան՝ երկարությունը 2.5 մ, փայտի լայնությունը 22-24 սմ, հաստությունը 3.5-5 սմ, ոտքերը մետաղական բարձրությունը 32-35 սմ, ոտքերն միմիյանց հետ կապող փայտ՝ 2.20-2.30մ երկարություն, լաքապատված
(2 հատ)

- Ձգման պարան՝վուշե հումքից,պարանի երկարությունը 8-10մ, տրամագիծ մինչև 3.5 սմ, վերջույթները ամրացված մշակված
(1 հատ)

- բասկետբոլի վահան՝ օրգանական ապակուց չապսը՝80-60, լրակազմ (զամբյուղ, ցանց)
(1 հատ)

- Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ
(2 հատ)
- Գնդակ մանկական՝ կաշվե կամ

փոխարինող հումքից, չափս № 3-4 (6 հատ)

- Ցատկապարան՝ սիլիկոնե, բռնակները՝ փայտե

կամ պլաստմասե (6 հատ)

- Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը

գրված պատվիրակության համար)՝ 65 սմ, 60 սմ

և 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե

պատվանդանով վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձ նախարարության

աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ

(3 հատ)

- Մարզադահլիճի վարձակալում

Գյումրի մարզաբազաներից մեկում, մարզադահլիճի

ձևավորում դրոշակներով և պաստառներով զարդարված

(1 օր)

- Ռադիոհանգույցի վարձակալում՝

բարձրախոս 7 կվ հզորությամբ, 2 բարձրախոս

առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ

(1 օր)

- Հաղորդավարի ծառայություն (1 օր)
- Մրցավարների համար մարզահագուստ

բամբակյա կտորից, ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ (հանձնվում է անհատ սեփականության իրավունքով)

(9 հատ)

- Նվերներ. մարզահագուստ մասնակից բոլոր

երեխաների համար՝ կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը

կարմիր՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը

սև (հանձնվում է անհատույց, սեփականության

իրավունքով)

(110 հատ)

- Մարզագույք. Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ.

հանձնվում է անհատույց, սեփականության իրավուքով՝

եզրափակիչ փուլում 4-11-րդ տեղերը գրված

նախադպրոցական հիմնարկներին (մեկական)

(8 հատ)

- Միջոցառման ավարտին ճայթռուկ (հրավառություն՝ 6 կետից) ծառայության մատուցում, մարզադահլիճում

Այլ ծախսեր գրենական պիտույքներ՝

- Բաններ միջոցարման անվանումով (խորդանիշով) պատրաստված պոլիէսթերային նյութից, բանների չափսը՝ 2 մ x 2 մ, 4 եզրերը մետաղյա օղերով 15-20 սմ հեռավորությամբ, բաների տեկստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ 1 հատ,

- ՀՀ եռագույն դրոշ՝ պատրաստված անջրաթափանց կտորից (10 մ x 1.4 մ), եզրերը կարված և վերջնամասերը կարված 2 հատ,
- ՀՀ եռագույն դրոշ՝ պատրաստված անջրաթափանց կտորից (2.5 մ x 5 մ) երեք եզրերը կարված, իսկ դրոշի վերին հատվածը՝ 7 սմ լայնությամբ կարված մետաղական ձողին ամրացման համար նախատեսված 1 հատ:

➢ Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և

ՀՀ զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի
3 հատ

- Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար
20 հատ

- Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ), 1 տուփ
100 հատ

Գունավոր ժապավեն սինթետիկ հումքից, գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ (տարբեր գույների)
150 մետր

- Կպչուն ժապավեն (սկոչ)
3 հատ
- Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ
3 հատ
- Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ^2 (210 x 297) մմ
2 հատ
- Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի
10 հատ
- Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ չափերի
10 հատ
- Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ
10 հատ
- Ապակարիչ. գրասենյակային ապակարիչ՝ N 10 ասեղներով կարված թղթերը քանդելու համար
1 հատ

- Տրանսպորտային միջոց եզրափակիչ փուլի մարզագույքը տեղափոխելու համար՝ մեկ բեռնատար մեքենա (Երևան-Վանաձոր- Երևան)

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	ավարտը
04.04.2017 թ.	20.06.2017 թ.

**Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը*

*** 1-ին և 2-րդ փուլերում անհրաժեշտ գույքը (պարգևատրման) Կատարողը հասցնում է ՀՀ մարզպետարանների և ԷՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմերի գտնվելու վայրեր, 3-րդ փուլի գույքը՝ (պարգևատրման) ք. Վանաձոր (ժամկետները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ):*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 90011004489
ՀՎՀՀ-02586282

Աշխատակազմի ղեկավար՝

Կ.Էլոյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

« Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 2050622060861001
ՀՎՀՀ 00135548

Տնօրեն՝ Գ.Հովհաննիսյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 4
2017թ. *փետրվարի* -- *29*-ին կնքված
N ՍՊ-ԴԸՇՁԲ-17/03 համաձայնագրի
97-2017

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աճող. Հազ.ՀՀ դրամ

N	Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում											
			1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ		
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
	1	3 = (4:15)	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	«Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն»մրցույթի անցկացման ծառայությունների ձեռքբերում					16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00
	Ընդամենը	0.00	0.00	0.00	0.00	16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00	16650.00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Աբովյան 9

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ [illegible]

ՀՎՀՀ [illegible]

Աշխատակազմի ղեկավար

Վ. Ելոյան
(ստորագրություն)

« Իմպերիում » ՍՊԸ
ք.Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7

«Էնեկոբանկ»ՓԲԸ

Հ/Հ 1930002060861001

ՀՎՀՀ 00135218

Տնօրեն

Դ. Հովհաննիսյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 3
<< >> ----------2017 թ. կնքված
N ---------- գնման պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
« Իմպերիում » ՍՊԸ	ՀՀ սպորտի և երիտասարդության
ք. Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7	հարցերի նախարարություն
«Ինեկոբանկ»ՓԲԸ	Հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 9
Հ/Հ 2050622060861001	Հ/Հ 900011004489
ՀՎՀՀ 00135548	ՀՀ ֆինանսների նախարարության
	գործառնական վարչություն
	ՀՎՀՀ 02586282

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ----------
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2017 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								
2								

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<_____>> _____ 2017 թ. կնքված
N գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ. ------- -ին կնքված N -------
----
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն